ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 348-Ա

01 հունիսի 2022 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԵՎԱՆ, ԳԱՎԱՌ, ՎԱՐԴԵՆԻՍ և ՇՈՂԱԿԱԹ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ 51 ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՏԱՐԱԾՔՆԵՐՆ ԸՆԴԳՐԿՈՂ ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ-1, ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ-2, ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ-5, ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ-6, ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ-7 ՄԻԿՐՈՌԵԳԻՈՆԱԼ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՀԱՄԱԿՑՎԱԾ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՆԱԽԱԳԾՄԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տարածքային կառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ սահմանված կարգի 61-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով համայնքների համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի ավագանու 2022 թվականի ապրիլի 12 N 44-Ա, Գավառ համայնքի ավագանու 2022 թվականի փետրվարի 25 N 25-Ա, Վարդենիս համայնքի ավագանու 2022 թվականի մայիսի 06 N 36-Ա և Շողակաթ համայնքի ավագանու 2022 թվականի փետրվարի 14 N 12-Ա որոշումները

որոշում եմ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի 51 բնակավայրերի՝ Սևան համայնքի (Սևան քաղաք, (Գագարին գյուղ), Գեղամավան, Դդմաշեն, Զովաբեր, Լճաշեն, Ծաղկունք, Ծովագյուղ, Նորաշեն, Չկալովկա, Սեմյոնովկա և Վարսեր գյուղեր), Գավառ համայնքի (Գավառ քաղաք, Բերդկունք, Գանձակ, Գեղարքունիք, Լանջաղբյուր, Լճափ, Ծաղկաշեն, Ծովազարդ, Կարմիրգյուղ, Հայրավանք, Նորատուս և Սարուխան գյուղեր), Վարդենիս

համայնքի (Վարդենիս քաղաք, Այրք, Ներքին Շորժա, Վերին Շորժա, Սոթք, Ազատ, Ավազան, Արեգունի, Արփունք, Գեղամաբակ, Գեղամասար, Դարանակ, Կախակն, Կութ, Կուտական (Զառիվեր), Նորաբակ, Շատջրեք, Շատվան, Ջաղացաձոր, Տրետուք, Փամբակ և Փոքր Մասրիկ գյուղեր) և Շողակաթ համայնքի (Շողակաթ, Արտանիշ, Աղբերք, Դրախտիկ, Ծափաթաղ և Ջիլ գյուղեր), տարածքներն ընդգրկող <<Գեղարքունիք 1>>, <<Գեղարքունիք 2>>, <<Գեղարքունիք 5>>, <<Գեղարքունիք 6>>, <<Գեղարքունիք 7>> համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի նախագծերը:

01.06.2022

X

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: SARGSYAN KAREN 3710840503

Կ. ՍԱՐԳՍՅԱՆ
Ք. Գավառ